

ՍՓՈՓԱՆՔԻ ՀԱՏՈՐՆԵՐ

Posted on May 10, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Ձօն մեր մայրերուն

Սիլվա Իսկիկեան Մահրեճեան, Լոս Անճելըս, 10 Մայիս 2022

Երբ գիս տեսներ, կարծես ամբողջ աշխարհը իրը կ'ըլլար: Խնդրանքս՝ իր հաճոյքն էր. ուրախութիւնս՝ իր երանութիւնը: Վստահ եմ, եթէ հոգին ալ խնդրէի, սիրով կու տար: Այս բոլորը, իբրեւ մանուկ եւ պատանի հասկցած էի, առանց տեսնելու ժպիտի հատիկ մ'իսկ իր դէմքին վրայ: Մեծ մայրս՝ 1905-ի ծնունդ ըլլալով, այդ հատիկներուն մեծ մասը սպառած էր որբութեան ու գաղթականութեան ճամբուն վրայ: Մնացածն ալ խամրած էր, իր Պոլսաբնակ եղբօր կարօտով :

Կիրակիները մեզի համար տօն էին, իսկ մեծ մօրս տունը՝ աշխարհի քարտէսին ամենէն գեղեցիկ վայրը: Մինչեւ երրորդ յարկ՝ տանիք հասնող թօնիկն, մեր խաղաղայրն էր: Եթէ հրաշագործ Աստուծոյ պաշտպանութիւնը չըլլար, ես եւ եղբայրս քանի մը անգամ երկինք բարձրացած կ'ըլլայինք: Մեծ մայրս թօնիկն կը թօթուէր եւ լեփ-լեցուն ճերմակ թասերով՝ ամբողջ թաղին «սեր» կը բաժնէր: Մեծ մօրս տան մէջ առաւօտուն արթննալը ամենամեծ հաճոյքս էր: Թօնիկին խիտ ճիւղերուն մէջէն արեւուն ճառագայթները փախուստի փայլուն ճամբաներ կը գտնէին ու կ'իջնէին մինչեւ սիրտիս խորքը:



Կեդրոնը՝ հեղինակին մեծ մայրը՝ Մարիամ Թաշճեան՝ շրջապատուած հարազատներով, իսկ աջին՝ մայրը Նուրիցա Թաշճեան Իսկիկեան

Մօրս կարած կապոյտով սեւ հագուստը բացառութիւն մըն էր իր ունեցած ընթացիկ սեւ հագուստներէն: Մեծ մայրս Պոլիս պիտի մեկնէր, իր մէկ հատիկ ողջ մնացած եղբայրը տեսնելու: Տարիներու երագ էր, որ մեծ զոհողութիւններով իրական կը դառնար: Մանուկի բնագոյով՝ վայրկեանին խորհրդաւորութիւնը կը զգայի...: Մեծ մօրս դէմքին լոյս նստած էր: Իր անժպիտ շնչառութիւնը կը լսէի...:

-Աղջիկս, ինծի հագուելիք մի բերեր. ինծի գիրք բեր: Ես ինչ ըլլայ սիրով կը կարդամ՝ վէպ, բանաստեղծութիւն, կրօնական, պատմական...:

Ինքնուս տիրապետած էր հայերէնին, իսկ լատինատառ նամակներ կը գրէր Պոլսաբնակ եղբօր՝ Գեղամին: Ականջես բնաւ չէն հեռանար իր խօսքերը. «Փողոցէն օրաթերթի պատառիկներ կը գտնէի. չիմացած տառերուս հնչիւնը, աջին ձախին հարցնելով կ'իւրացնէի: Բազմանդամ էինք մէկ սենեակի մէջ, մոմի լոյսով՝ գլուխս մահճակալին տակ պահած, գիրքեր ամբողջացուցած եմ: Երբեմն ալ տարուած՝ գիշերներ լուցուցած եմ...»:

-Սա օթեկ հացերը Աստուր քեռիին նապաստակներուն տանիմ:

Պատանուհիի պարզութեանը կ'ըսէի.

-Ա՛խ մեծ մամա, հիմա այդքան ճամբայ պիտի քալես, նապաստակներուն հա՞ց հասցնես:

-*Եաւրըմ*, ես հաց չեմ կրնար թափել. ես ծիուն թրիքին մէջէն գարիի հատիկներ կերած եմ...:

Անօթութիւնը իր յիշողութեան մէջ ակեր գործած էր: Մեզ շռայլօրէն կերակրելը իր գերագոյն հաճոյքն էր: Իր մատներով ոլորուած թահինով հացը՝ մինչեւ օրս մրցակից չունի: Հապա իր անուշաբոյր ճաշի կաթսանե՞րը, խորիզով գաթսանե՞րը...: Պատառ - պատառ իր հոգիով սեր կը թխէր...:

Երիտասարդ մօրս մահը, իր չունեցած ժպիտը եւ լսողութիւնը տարաւ: Ո՛չ գաղթի ճամբան, ո՛չ Պոլիսը, ո՛չ ալ սովը զինք այդքան ցաւցուցած էին...: Թթենին ալ չորցաւ: Այլեւս անոր ճիւղերուն մէջէն արեւը չէր թափանցեր...: Ի՛նչ փոյթ, թէ նապաստակները ինչ կ'ուտէին...:

-Սիլվա՛ աղջիկս, ճաշ եփելը մոռցած եմ...:

-Մեծ մամա՛, քեզի գիրքեր բերած եմ:

Կարծես թէ մարմինէն ելեկտրական հոսանք մը կ'անցնի ու մխիթարութիւն գտածի եռանդով, գիրքերը կը գրկէ, կը շոյէ, կը զննէ...: Ձեռքին մէջ՝ ցաք ու ցրիւ օրաթերթի պատառիկներ չէն այլեւս, այլ ամբողջութեամբ՝ միայն իրեն պատկանող, սփոփանքի հատորներ:

Comments



Սիլվա Պեքարեան – 2022-05-10 08:01:29

Այս ձիրքդ ո՞ւր պահած էիր...Վարձքդ կատար, գրիչդ անսպառ, հաճոյքով կարդացի:



Silva Iskikian – 2022-05-10 01:07:41

Խորին շնորհակալութիւն կը յայտնեմ Պարոն Տիգրան Աբրահամեան, որ Մայրերու Օրուան տօնին առիթով յարմար գտաք « Սփոփանքի Հատորներ» գրութիւնս տեղադրել Գեղարդին keghart.org-ի կայքէջին վրայ: Գնահատելի առաջարկ մըն էր մեծ մօրս նկարը կցել յօդուածին: Հաճելի պահեր ապրեցայ Աւստրալիաբնակ քրոջս հետ, հին նկարներու փնտռտուքով ու անոնց ստեղծած յուզումնախառն յիշողութիւնները ապրելով: